



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Յուշանուէրի յանձնում՝ Առաքին Տիգրան:

ԼՕՍԻ Ծրջանային վարչությունը, Ծաբաթ, 23 Փետրուար 2002ին, «Շերաթն Բորալ Պիչ» պանդոկի «Սալ տէ պ'Անպաստէթ» շքեղ սրահին մէջ կայանակերպեց ճաշկերոյթ մը, հովանաւորութեամբ Լիբանանի Առաքին տիկին Անտրէ Լահուտի, նախագահութեամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի և պատուոյ իրեր «Արաքի Պուրջուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի բարերար տէր և տիկին Մելքոն Պուրջուրճեաններուն և նշեց Ա. Պ. Բ. Կեդրոնի 15ամեակը:

Ներկայ էին նաեւ, ընկերային բարօրութեան նախարար Ասատը Տիգրայ, երիտասարդութեան և մարմնակրթութեան նախարար տէր և տիկին Սեւակուի Յովնանեան, Հայաստանի դեսպան՝ տէր և տիկին Արեգ Յովհաննիսեան, Ճափոնի դեսպան՝ տէր և տիկին Նասօ Կոմարի, Պենիլի ինպատու տէր և տիկին Արա Վանյան, Լեոնայի Դարաբազի Հանրապետութեան Միջին Արեւելքի դեսպան տէր և տիկին մեծ վարպետ Կարօ Քեպապեան, Պուրճ Համուտի և Այնճարի քաղաքացիներ տար Անդրանիկ Մարգարեան և տէր և տիկին Սեպուհ Սպարթան, ՄԱԿի Համաշխարհային Առողջապահութեան կայանակերպութեան՝ WHOի Միջին Արեւելքի ներկայացուցիչ տէր և տիկին տոքթ. Հասիպ Լաթիբ, ինչպէս նաեւ տեղական և միջազգային կայանակերպութիւններու ներկայացուցիչներ, անձնակազմի անդամներ և մեծ թիւով իրեր:

Յարաբերական յանձնախումբի անունով, բացման խօսք արտասանեց տիկին Ռէն Պապիկեան - Քիւրան, որ բարի գալուստ մաղթեց եւ շնորհակալութիւն յայտնեց ներկայիցներուն:

Ապա խօսք արտասանեց Ծրջանային վարչութեան ատենապետուհի՝ ընկերուհի Սեդա Ստրէշեան. ան ըսաւ. «Շնորհակալութիւն ձեր իւրաքանչիւրին ձեռնարկին և ձեր յանձնառութեան համար՝ Վորակիկ կանգնելու Լիբանանահայ Օգնութեան խաչին, որպէսզի կարողանանք յարթահարել մեր ժողովուրդի պատկանէր արգելակող դժուարութիւնները: Այս երեկոյի այս գեղեցիկ երեկոյթը, արտայայտութիւնն է պահի նպատակներու ծառայութեան արեւստին, որուն ուժովն ու կոչումովն է, որ կ'արտայայտուի մեր հաւատարմութեամբ ժողովուրդին ապագային նկատմամբ և մեր հաւատարմութիւնը՝ Լիբանանահայ Օգնութեան խաչի առաքելութեան: Հաւատարմութեամբ խոստումներ կատարելու անոնց, որոնք յայտնուի կարեկցութեամբ իրենց

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԹԱԳԱԽՈՐԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ բարձր գնահատեց Միւտակա՛ն Արաքիոյ Ճահտ թագաւորին ցուցումներով Ռիաւտի կողմէ Լիբանանի տրամադրութեամբ օժանդակութիւնները:

Ճահտ թագաւորի անձնակազմի պատուիրակ, պետական նախարար Մուսայէտ Մոհամէտ Այպպար ընդունեց պահուն նախագահ Լահուտ անկէ ինչպէս Ս. Արաքիոյ թագաւորին փոխանցել իր շնորհակալութիւնը Լիբանանի և լիբանանցիներուն հանդէպ անոր ցուցաբերած ջերմ պգացումներուն համար:

Նախագահ Լահուտ նաեւ դրուատիքով խօսեցաւ Միւտակա՛ն Արաքիոյ գահաժառանգ իշխան Այպպար Վալիի մասին, որ նշեցուց կրկանի արաբական կեցուածքին և կրպաշտպանէ պաղեստինեան իրաւունքները իրապէսեան ոտնձգութիւններուն դիմաց: Ան հաստատեց, որ յառաջիկայ ամիս Պէյրութի մէջ գումարելիք արաբական վեհաժողովը առիթ պիտի հանդիսանայ վերահաստատելու արաբական միացեալ կեցուածքն ու ներքին պորակցութիւնը, եւ ընդգծեց, որ Միւտակա՛ն Արաքիա մեծ դեր ունի արաբական միացեալ կեցուածքի բիրտնաջանումին մէջ:

Միւտակա՛ն պաշտօնատար նախագահ Լահուտի յանձնեց սխումքի թագաւորէն նամակ մը, ուր ան

շնորհակալութիւն կը յայտնէ արաբական վեհաժողովին ներկայ գտնուելու համար նախագահ Լահուտի ուղղած հրաւերին համար:

Ճահտ թագաւոր նաեւ կը հաստատէ, որ արաբական աշխարհի կարիքը ունի եւ վճռած է ամրապնդել եղբայրական կապերն ու գործակցութիւնը, պաշտպանելու համար համաարաբական շահերը եւ դիմագրաւելու անոնց ուղղուած մարտահրաւերներն ու սպանալիքները, մանաւանդ իսրայէլեան ոտնձգութիւնները:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց այցելութիւնները Հոր լանտայի դեսպան Եան Փիէթ Զիլվէն Տր Սուանի, բանակի հրամանատար Վոր. Միշէլ Սիւլէյմանի, տիկին Ճիւս Էլիսա

մագրաւելու անոնց ուղղուած մարտահրաւերներն ու սպանալիքները, մանաւանդ իսրայէլեան ոտնձգութիւնները:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց այցելութիւնները Հոր լանտայի դեսպան Եան Փիէթ Զիլվէն Տր Սուանի, բանակի հրամանատար Վոր. Միշէլ Սիւլէյմանի, տիկին Ճիւս Էլիսա

Ծաբ.՝ էջ 10

ՍԱՅՏԱՅԻ ԴԱՇՏԻՆ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԸՆԽԱՊԱՏՐԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Նախարար Յովհաննէս կը ընկէ Սայտայի դաշտը:

Երիտասարդութեան և մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ Սայտայի միջազգային մարզադաշտին մէջ ժողով մը գումարեց նախարարութեան ընդհանուր տնօրէն Չէյտ Սիւմէի, Բարաւեան մանկ. Կերաշի-նութեան խորհուրդի ներկայացուցիչ Իպրահիմ Շահրուրի և մարզադաշտի կառուցման աշխատանքի ուսումնասիրութեան և գործադրութեան ընկերութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Ժողովին նախարար Յովնանեան պիտի ստանձնէր դաշտը, սակայն նկատուեց որ Սայտայի եւ Թրիփոլի մարզադաշտերու նորոգութեան և վարչութիւններուն, ինչպէս նաեւ այս աշխատանքներուն ծախսերուն մասին թղթածրարը ամբողջացած չէ, եւ մեկնելով մարզադաշտերու արդիւնաւորման և լաւագոյն օգտագործելու գծով իր նախաձեռնութիւններն էին, նախարար Յովնանեան որոշեց յետաձգել ստանձնումը:

Նախարարը երեքշաբթի, 5 Մարտին վերոյիշեալ կողմերուն հետ ժողով մը պիտի գումարէ յիշեալ թղթածրարը ստանալու եւ վայն փոխանցելու կառավարութեան, որպէսզի ապահովուին անհրաժեշտ գումարները եւ կապուի մարզադաշտերուն յատուկ յանձնախումբը:

ԼՕՍԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

Տիար Մկրտիչ Սարգսեան  
Տէր և տիկին Յարութ և Մարալ Միսեան  
Տիար Գրիգոր Թորոսեան  
Տէր և տիկին Բիւզանդ Մէլգրեան և զաւակուհի  
Տէր և տիկին Ժպրան Ապու իսախան և զաւակուհի  
Սարգսեան ընտանիք  
Թոգաթեան ընտանիք  
և Համայն ազգականներ կը գովեն իրենց կնոջ, մօր, գորանչին, մօրաբոլը և հարազատին՝

ԿԱՏԱՐԻՆԷ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 25 Փետրուար 2002ին, առաւօտեան ժամը 4:30ին, իր ընկարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ նոյն օրը՝ 25 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:  
●Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:  
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մար Եուսէֆ եկեղեցւոյ փողոց, ոստիկանատան շէնք, Տրոյ յարկ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Աննա Պէգրիկեան և զաւակները՝ Փօյ, Արա, Յարութ և Վիգէն  
Տէր և տիկին Ժան Պէգրիկեան և զաւակուհի  
Տէր և տիկին Համարձուս Պէգրիկեան և զաւակուհի  
Տէր և տիկին Յակոբ Քէշիշեան և զաւակուհի  
Տէր և տիկին Օննիկ Աւետիսեան  
Տիկին Սոնա Թորոսեան և զաւակուհի  
և Համայն ազգականներ կը գովեն իրենց զակին, եղբոր, հօրեղբոր և հարազատին՝

ՏԻԳՐԱՆ ՊԵՋԻՐԿԵՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 19 Փետրուար 2002, Փաստենայի մէջ, Միացեալ Նահանգներ:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 26 Փետրուարին:  
●Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:

ՍՏԱՅԱՆՔ

●«ԱՐԱՐԱՏԸ ՊԵՏՔ Է ՄՆԱՅ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՂՄԸ»

Հեղինակ՝ ՎԱԿԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
Պէյրութ, 2001

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ՎԱՆԱՅ ԶԱՅՆ  
Այսօր, Երեքշաբթի, 26 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 6:00ին, կրնաք լսել մեր հարցալրոյցը հայրենի երգիչներ  
ԱՐԱՍՈՅԻ ԵՆ ԷՄՄԱՅԻ ԳԵՆ  
●Յայտագիրին կրկնութիւնը՝ երեկոյեան ժամը 9:00ին:

ԱԶԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ՔՈՒԷՃ

ԲԱՅՈՒՄ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Հովանաւորութեամբ՝ ԳԵՐՃ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմին)  
Նախագահութեամբ՝ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ ԴՈՎՏ. ՂԱՍՍԱՆ ՍԱԼԱՄԵԻ  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 1 Մարտ 2002, երեկոյեան ժամը 7:30ին, քոլէճի շէնքին մէջ:  
ԸՐԱԽԵՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՖՈՆՏ

ՉՐՈՅՑ - ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆ Նիւթ՝ Դ. Վ. Ա.

Չեկուցաբեր՝ ՅԱԿՈԲ ԱՐԱՐԱՇԱՄԵԱՆ (ԵՐԴՈՒԵԱԼ ՇԱՇՈՒԵՆՆԻՉ)  
Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 5 Մարտ 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Յ. Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ԱՐԱՄ Ա. ՆԱԽԱԳԱՐԵՑ Ե. Յ. Խ.Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

Փետրուար 17 - 22ին, Դանիոյ մէջ գումարեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գործադիր վարչութեան ընթացիկ տարուան առաջին ժողովը:

Գործադիր վարչութեան ժողովին օրակարգը կը բաղկանար վարչական, ծրագրային, յարաբերական ու տնտեսական բնոյթ ունեցող հարցերէ: Ժողովին բացումը կատարելով՝ Արամ Ա. Կաթողիկոս ընդհանուր գիծերու մէջ պարզեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի վերջին ամիսներու գործունէութիւնը իր գլխաւոր բնագաւառներով: Շեշտեց 11 Սեպտեմբերի ահաբեկչական արարքներու հետեւեալները միասնաբար դիմագրաւելու անհրաժեշտութիւնը եւ ժողովականներու յատուկ ուշադրութեան յանձնեց Խորհուրդին դիմագրաւած տնտեսական դժուարութիւնները եւ պահունք հաւաքական յանձնառութեամբ լուծելու հրամայական կարիքը: Յաջորդող երկու օրերուն Ե. Ս. ի պահանջաւ բաժանումներուն տնօրէնները հակիրճ կերպով ներկայացուցին իրենց տեղեկագիրները: Ապա տեղի ունեցաւ տեղեկագիրներին բխած հարցերու քննարկում: Վերջին երկու օրերուն ընթացքին ժողովականները իրենց աշխատանքը կերպով ցուցանեցին յանձնախումբերու կատարած քննարկումներու արդիւնքին վրայ: Այս շրջագիծէն ներս որպէս յառաջիկայ քանի մը ամիսներու առաջնահերթ կարեւորութիւն ներկայացուող աշխատանքներ, որոշուեցաւ հետեւեալը:-

- 1.- Կարճաժամ Ներկայացուցիչ տնտեսական ծրագիրներ պատրաստել՝ առաջը առնելու համար տնտեսական դժուարութիւններուն, որոնք յառաջացած են միջազգային տնտեսական տագնապին իբրեւ հետեւանք:
- 2.- Յատուկ կարեւորութիւն ընձայել քրիստոնէա-իսլամ երկխօսութեան՝ յատկապէս կայմակերպելով քրիստոնէա-իսլամ դեկլարատիւններու հանդիպում մը Շրնէի մէջ:
- 3.- Յատուկ ուշադրութիւն ընձայել քրիստոսարդութեան՝ անոր տալով էջիւմէնիք կայմաւորում: Այս գծով դիմելով անհրաժեշտ միջոցառումներու:
- 4.- Նոր մղում մը տալ Կեդրոնական ու Արեւելեան Երրոպայի մէջ տեղի ունեցող էջիւմէնիք աշխատանքներուն:
- 5.- Նոր մղում ու ծաւալ տալ Ափրիկէի մէջ կատարուող էջիւմէնիք աշխատանքներուն՝ դիմելով անհրաժեշտ գործիքային քայլերու:
- 6.- Յառաջիկայ Կեդրոնական վարչութեան ժողովի ընթացքին ընտրել նոր ընդհանուր քարտուղարի փնտրուող յանձնախումբը, ինչպէս նաեւ յառաջիկայ համաժողովի նախապատրաստութեան յանձնախումբի կորիպը:
- 7.- Գործադիր վարչութիւնը յայտնի քննարկեց Ուղղափառ եկեղեցիներու մասնակցութեամբ նշանակուած Յատուկ Յանձնախումբի աշխատանքները եւ որոշեց մտնել հետեւի այս գործընթացին՝ ընդգծելով Ուղղափառ եկեղեցիներու առաւել գործելու մասնակցութեան կարեւորութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կեանքին ու առաքելութեան մէջ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը լիբանանահայ քուէրկոյններուն կը տեղեկացնէ, թէ Սոր քուէրկոյններու ամուսնացանկեր (լուսե շաքրա) հրապարակուած են ցերեք գործոց ճակարարութեան կողմէ: Այն քաղաքացիները, որոնք 2000ի երեսփոխանական ընտրութիւններուն չկրցան քուէրկել՝ անուցի կամ այլ սխալի պատճառով, նախարարութեան որոշումով իրաւունք ունին մինչեւ 11 Մարտ 2002 կատարել սրբագրութիւններ: Սրբագրութիւններ և ստուգումներ կատարելու համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Ճաղգոյեան» Մշակութային Կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01-259881:  
Դիմողները պարտին իրենց հետ ունենալ իսրաւած քայտի լուսապատճեն մը:  
ԸԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՃԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՄԱՀԱԶԴ

Տիար Կարպիս Ճոճեան և զաւակը՝ Բաֆֆի Տիկին Անժէլ Գանթարճեան  
Տէր և տիկին Ջաւէն և Սիլվա Նէնէճեան  
Տէր և տիկին Վազգէն Գանթարճեան և զաւակուհի  
Տէր և տիկին Արամ Ճոճեան և զաւակը  
Տիկին Այիս Տէօլլիթեան և զաւակուհի  
Տիկին Փերոզ Գունտաքճեան և զաւակուհի  
Տիկին Վարդուհի Ճոճեան և զաւակուհի  
Տիկին Արշօ Տիմիճեան  
Տէր և տիկին իսախան Գանթարճեան և զաւակուհի  
Տիկին Ժիւլիէթ Պոյաճեան և զաւակուհի  
և Համայն ազգականներ կը գովեն իրենց կնոջ, մօր, աղջկան, քրոջ և հարազատին՝

ՍԵՂԱ ՃՈՃԵԱՆԻ

(ՇՆՃԱԿ՝ ԳԱՆԹԱՐՃԵԱՆ)  
մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 25 Փետրուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 26 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:  
●Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:  
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Տրքուան, «Ալա» թաղ, «Ալի Շախա» շէնք, 4րդ յարկ, Երեքշաբթի 26, Չորեքշաբթի 27 և Հինգշաբթի 28 Փետրուարին:



ՁԱԻԱՆՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐ ԴԺԳՈՂ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁԷՆ

20 Փետրուարին Վրաստանի խորհրդարանի անվտանգութեան եւ պաշտպանութեան յանձնարարածը քննարկած է Զաւախքի եւ Փանքիսի կիրճին մէջ ստեղծուած իրավիճակը:

Նիստին ետք Վրաստանի արտաքին գործոց նախարար Իրաքի Մենադարիշվիլին յայտարարած է, թէ Զաւախքի ինքնավարութեան հարցը պէտք է լուծուի երկրին սահմանադրութեան շրջանակներուն մէջ, իսկ «մնացած բոլոր պահանջները անհիմն են»: Ան լրագրողներուն ըսած է, թէ Զաւախքը Վրաստանի անբաժանելի մէկ մասն է եւ կը բացառուի, որ ապագային այդ շրջանին ինքնավար կարգավիճակին մասին խօսակցութիւններ ըլլան: Այդ առիթով արտաքին գործոց նախարարը ողջունած է «անջատողականութեան դէմ ուղղուած Հայաստանի իշխանութիւններու յստակ դիրքորոշումը»: Եւ անոնց պատրաստակամութիւնը՝ օգնելու շրջանին խնդիրներու լուծման: Ան նշած է, թէ Ախալքալաքէն ուսանողական ռազմական ղեկավարման անջնջութեամբ եղած բնակչութեան բողոքները ունին յստակ հիմքեր եւ այդ գծով Ռուսիոյ հետ բանակցութիւններ կը կատարուին:

Ըստ «Ազատութիւն» ռատիոկայանին, Զաւախքի իրավիճակին մասին խօսած է նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամաւոր Վան Բայրուրդեան եւ վստահեցուցած է, թէ Զաւախքի հայ բնակիչները չեն ենթարկուիր սարգանքի եւ չեն ինչոք անկախութեան գաղափարի ծուղակը:

Վրաստանի պետական անվտանգութեան փոխ նախարար Լաշա Նազգվիշվիլին անջատողականութեան դրսեւորում համարած է Զաւախքի մէջ գոր-

ծող շարք մը կազմակերպութիւններուն, որոնց կարգին՝ հայկական «Զաւախք» եւ «Վիրք» կազմակերպութեանց պահանջը շրջանին ինքնավարութեան կարգավիճակ տրամադրելու:

Լաշա Նազգվիշվիլին «Փրայմ Նիուզ»ին ըսած է, թէ հարցը պէտք է քննարկուի համաշխարհային անջատականութեան համախորհրդակցութեան համակարգին մէջ:

Վրաստանի Հանրապետական կուսակցութեան առաջնորդներէն մէկը՝ քաղաքագետ Իվիլիան Ուայնտրաւա յայտարարած է, թէ Զաւախքի հարցը չլուծուի պիտի յանգեցնէ Հարաւային Կովկասի լիակատար քառաւոր վիճակին: Ան «Փրայմ Նիուզ»ին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին ըսած է, թէ այդ իրավիճակին կը գիտակցին բոլոր քաղաքական գործիչները: Ան խօսած է վրացական իշխանութեան դիրքորոշումին մասին եւ՝ ըսած է, թէ փոխանակ հարցին լուծում մը փնտրելու, անոնք մէկ կողմ կը քաշուին եւ առիթ կու տան «կիրքերու բորբոքումին»:

Ի. Ուայնտրաւայի համաձայն, ճիշդ չէ ըսել, թէ Զաւախքի մէջ կը գործեն խումբ մը ծայրայեղականներ: Ան աւելցուցած է, թէ հարցին ժխտական կողմը այն է, որ շրջանին վրայ ազդելու լծակները կը գտնուին ոչ այնքան Երեւանի, որքան Մոսկուայի մէջ, ուր Հարաւային Կովկասի քառուր բնաւ չ'ընկալուիր իրրեւ Ռուսիոյ պետականութեան մահացու սպառնալիքը:

Ըստ անոր, եթէ Վրաստանի նախագահն ու իշխանաւորները Զաւախքի իրավիճակը հասցնեն Փանքիսի կիրճի վիճակին, ապա Վրաստանի ապահովման կըրնայ անշրջանցելի բնոյթ ունենայ:

ԱՂԵՏԻ ԳՕՏԻ

ԴԻՊԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՅԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

21 Փետրուարին լրագրողներուն հետ ունեցած հանդիպումի մը ընթացքին Հայաստանի քաղաքաշինութեան նախարար Դաւիթ Լոբեան խօսած է Հայաստանի կառավարութեան ընդունած աղէտի գոտիի բնակարաններու կառուցման վերաբերող որոշումին մասին:

Ան ըսած է, թէ այդ տեղ կառուցուած բնակարաններուն մէջ ապրող, ըստ միջին 1988 թուականի երկրաշարժը այդ բնակավայրերուն հետ առնչութիւն չունեցող մօտ հազար ընտանիքներուն պետութիւնը 2002-2003 թուականներուն պիտի յատկացնէ ամսական 10 հազար դրամ՝ բնակարանի վարձքի ծախսերը հոգալու համար:

Այն ընտանիքները, որոնց մէկ մասը արդէն կը բնակի բնակարաններուն, իսկ միւսը՝ տնակներուն մէջ, որոշ օժանդակութիւն պիտի ստանան բնակարանային պայմաններու բարելաւման համար:

Ան նշած է, թէ 2004 թուականէն այդ ընտանիքներու բնակարանային ապահովման խնդիրները պիտի լուծուին աղէտի գոտիի մէջ անտունի կարգավիճակ ունեցող այլ ընտանիքներուն համար սահմանուած սկզբունքներով: Աղէտի գոտիի վերականգնման ծրագիրին երկրորդ փուլը անհրաժեշտ պիտի լուծուի երկրաշարժի պատճառով բնակարան կորսնցուցած ընտանիքներու բնակարանային խնդիրը եւ պիտի ներառէ նաեւ վերոյիշեալ 1000 ընտանիքները: Անոնց մէկ մասը, Միացեալ Նահանգներու միջազգային զարգացման գործակալութեան բնակարաններու վերաբերող ծրագրին միջոցով արդէն ստացած են 1 սենեակնոց բնակարաններ:

Ըստ Դ. Լոբեանի, իշխան միջոցներու բաշխումը պիտի իրականացնէ ընկերային ապահովութեան նախարարութիւնը: Ան նշած է, թէ պէտք է տեղահանուին շրջանին մէջ գտնուող կարգ մը կառույցներ (խանութներ, կրպակներ), որոնք կը խոչընդոտեն քաղաքաշինական խնդիրներու լուծման աշխատանքները: Կը նախատեսուի այս հարցը մարդըղովին լուծել մինչեւ 2003:

ՄԵԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱԹՈՒՒ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

21 Փետրուարին Հայաստանի ազգային փոքրամասնութիւններու համակարգող խորհուրդի նիստին ելոյթ ունեցաւ Հայաստանի նախագահի մշակոյթի հարցերու խորհրդական Ռազմիկ Դաւոյան:

Ան ըսաւ, որ ինք նպատակ ունի առաջարկ ներկայացնել Հայաստանի նախագահին եւ կառավարութեան, որ Հայաստանի ազգային փոքրամասնութիւնները մէկ միասնական թեկնածուով ներկայանան յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն:

ՀԺԿ ԿԸ ԾՐԱԳՐԷ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԿՅՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԵԼ

«Ազատութիւն» ռատիոկայանին հետ տեղի ունեցած հարցազրոյցի մը ընթացքին Հայաստանի Ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ) ղեկավար Ստեփան Դեմիրճեան յայտնած է, որ պիտի կազմուի կուսակցութիւնը ներկայացնող պատգամաւորներէն բաղկացած պատգամաւորական նոր խմբակցութիւն մը: Ան միաժամանակ նշած է, որ այս ծրագիրը նկատուի չէ անունուած կուսակցութեան վերին մարմիններուն կողմէ:

Պէտք է նշել, որ պատգամաւորական խմբակցութիւն կազմելու համար անհրաժեշտ է ունենալ տասը-մէկ պատգամաւորներ: Ներկայիս, ՀԺԿ խորհրդարանին մէջ շատ հետեւորդներ չունին:

ԿՈՎԿԱՍ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ՓՈՐՁ

«Մետիամաքս» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Միջազգային Դրամական ֆոնտը եւ Համաշխարհային Դրամատուրը կը ծրագրեն օժանդակութիւն ապահովել՝ Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ զարկ տալու համար շրջանային համագործակցութեան:

Այս նախաձեռնութիւնը մտայնացողներուն համար, Կովկասի համար ամէնէն հիմնական առաջադրանքը առեւտրական արդիւններու նուազումն է: Այս հարցը լուծելու համար անոնք կ'առաջարկեն կազմել շրջանային գործակցութիւններ, որոնք պիտի նպաստեն Կովկասի մէջ առեւտուրի եւ տնտեսութեան մարգերուն մէջ համագործակցութեան:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՋ

15 Փետրուարին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Դուկասեան հանդիպում ունեցած է աշխատանքային այցելութեամբ Արցախ գտնուող Ստեփանակերտի առողջապահական նոր համալիրի կառուցման ծրագրի ղեկավար Ալինէ Դուրբանի հետ:

Վերջինս Ա. Դուկասեանի ծանօթացուցած է այս համալիրի կառուցման աշխատանքներուն եւ անոնց ֆինանսաւորման միջոցներուն: Հանդիպման քննարկուած են համալիրին մէջ մտնող հիւանդանոցի կառուցման ծրագրի իրագործման եւ զայն ժամանակակից բժշկական սարքաւորումներով համալրելու վերաբերեալ հարցերը:

Արկաղի Դուկասեան երախտագիտութիւն յայտնելով Ալինէ Դուրբանին՝ յոյս յայտնեց, որ շինարարական աշխատանքները արագ կ'աւարտին:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

ՈՒՍՏՈՒՆԿՈՒՆԻ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏՊՈՒՆԱՏԱՐ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՆՈՐ ԿՅՈՐԳ

Վերջերս Ուաշինկթընի մէջ Հայաստանի դեսպանատան գինուորական նախկին կցորդ Հայկ Գոթանճեանի փոխարէն այս պաշտօնը ստանձնեց նոր նշանակուած կցորդ Արմէն Սարգսեան:

Այս առիթով կայացած հանդիպումին ընթացքին Հայաստանի դեսպան Արման Կիրաւորեան դուրսատած է Հ. Գոթանճեանի աշխատանքը՝ իբրեւ առաջին գինուորական կցորդ: Ապա դեսպանը ներկայացուցած է գինուորական առաքելութեամբ կատարուած այցելութիւնները, որոնք յատկանշական եղած են Միացեալ Նահանգներ - Հայաստան յարաբերութիւններուն մէջ: Ա. Կիրաւորեան նաեւ ներկայացուցած է նոր կցորդը, որ կ'ալկապէ բանակին մէջ կը ծառայէ հիմնադրութեան օրէն ի վեր: Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մէջ արտաքին կապերու եւ գինուորական համագործակցութեան բաժանմունքի պետի եւ Ջինստանի մէջ Հայաստանի դեսպանատան կցորդի պաշտօնները Արմէն Սարգսեանի զբաղեցուցած վերջին պաշտօններն էին:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՄ

Հայ մշակութային ընկերակցութեան կազմակերպութեամբ կայացած է 7 օր տեւող նաւապատոյտ մը, որուն ընթացքին 2300 ճամբորդները, որոնք 750ը հայեր էին, այցելած են Սան Խուան, Սան Թոմաս, Քաթարինա Ալլընտ, Պահամաս եւ այլ

տեսարժան վայրեր: Շրջապատոյտին ընթացքին գործադրուած է հայկական երգ ու պար ընդգրկող յայտագիր, ցուցադրուած են երկու ժապաւէններ՝ 1992ին Հայաստանի մէջ պատրաստուած «Կայտը» եւ միջազգային ճանաչումի արժանացած Ատոմ Էլոյեանի «Օրացոյցը»: Նախարարութեան անսանկիցները նաեւ ծանօթացած են ՀՕՄի ծառայութիւններուն ու բարեսիրական ծրագրերին: Ուաշինկթընի մէջ Հայաստանի դեսպանը բացատրութիւններ տուած է Հայաստանի ներկայ կացութեան մասին:

ՆՈՐ ԵՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՔՐԻՍՏՈՆԵՒՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1700ԱՄԵԿԱ»

Վերջերս, յոյս տեսած է Արմէն Տօնոյեանի «Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակը» գիրքը, որուն մէջ ներկայացուած է քրիստոնէութեան նաեւ առաջ հայութեան կրօնը, Հայաստանի մէջ քրիստոնէութեան մուտքը, պետական կրօն հռչակուելու, Ամենայն հայոց կաթողիկոսութեան պատմականը, գիրքերու գիւտը, գրականութիւնը, մատենագրութիւնը, վանքերը, համալսարանները եւ հայ մշակոյթը:

ՋՈՒԹԱԿԱՆՔԻ ՔԻՄ ՔԱՇՔԱՇՏԵԱՆԻ ԵՆՈՅԹԸ

Պոսթընի «Հարվորտ» համալսարանի Սենտրոյ պարահին մէջ ելոյթ ունեցած է Վալոյա տեսակի լավագոյն ջութակահար-

ներէն Քիմ Քաշքաշեան: Ան ներկայացուցած է Միացեալ Նահանգներու ընդհանրական սովորութիւններէն եւ աւանդութիւններէն ներշնչուած կտոր մը:

Ք. Քաշքաշեան միշտ ուզած է դասական եւ ծանօթ կտորներու կողքին ներկայացնել արդի կտորներ: Վերջերս, իր խտացուած ծայնապահին մէջ, Քուրթալի եւ Էթիօպի կտորներ ներկայացնելէ ետք, ան լոյս պիտի ընծայէ նոր ծայնապահ մը՝ ներկայացրելով Լուչիանօ Պերիոյի գործերը:

ԱՐԹԻՐ ՄԵՍՉԵԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

Պոսթընի մէջ յոյս տեսած է Արթիւր Մեսչեանի նոր խտացուած ծայնապահականներու հաւաքածոն: Չորս ծայնապահներու մէջ խտացուած են անոր գործերը, որոնց շարքին են Մուշեղ Իշխանի բանաստեղծութիւններէն եւ Սայաթ Նովայի «Ես չգիտեմ»ը:

ԳՎԵՆԱԿԱՆՔԻ ՏՕՆԵՒԵԱՆ՝ ՄԱՐՏԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Մասնագէտ դաշնակահար եւ յօրինող Արմէն Տօնէլեան Մարտին Հայաստան պիտի այցելէ երեք ամիսով ճազ երաժշտութիւն դասաւանդելու համար:

Ա. Տօնէլեան 1986էն ի վեր կը դասաւանդէ Նիւ Եորքի Նիւ Արթուր Երեւանի վարձարանի մէջ, իսկ 1993էն ի վեր՝ Ուիլիամ Փեթրոսի համալսարանին մէջ: Ան ունի գիրք մը «Թրեյնինգ ար իր» անունով:

Ան ելոյթներ ունեցած է ամերիկեան գանազան քաղաքներու մէջ՝ հռչակաւոր երգիչ - երգչուհիներու ընկերակցութեամբ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ Ս. ԷՉՄԻԱԾԻՆԻ ՄԵՋ

Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի տնօրինութեամբ նոր նշանակումներ կատարուած են Ս. Էլմիածինի կառույցներուն եւ թեմերուն մէջ:

Այսպէս, Միւնիխ թեմի առաջնորդ Աբրահամ եպ. Մկրտչեան նշանակուած է քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի խորհուրդի նախագահ՝ շարունակելով կատարել թեմակալ առաջնորդի պարտականութիւնները:

Այլ տնօրինումով մը Սեւանի վազգէնեան դպրանոցի տեսուչ Բարսեղ արղյ. Գալստանեան նշանակուած է տեղեկատուական համակարգի խորհուրդի նախագահ:

Սարգիս քնյ. Չոփուրեան, Մաղաքիա քնյ. Օհանեան եւ Վաչէ քնյ. Հայրապետեան պիտի ծառայեն Նոր Նախիջեւանի եւ Ռուսիոյ Հայոց թեմին մէջ: Թեմի առաջնորդ Եղբարս եպ. Ներսիսեանի տնօրինումով անոնք իրրեւ հոգեւոր հովիւ իրենց ծառայութիւնը պիտի բերեն Ս. Փեթրոսպոլի, Վոլոկոպոտի եւ Աստրախանի մէջ:

ՀԱՅԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԿՐԱԿՈՑ

«Ազրպէյճան» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Ղազախի Ապասայէլի գիւղին մէջ 12 Փետրուարի գիշերը հայերուն կողմէ կրակոցներ եղած են: Գիւղը Հայաստանէն բաժնուած է ջրանցքով մը: Վերաւերուած է գիւղացի մը:

Ըստ ազրպէյճանական աղբիւրին, հայերու կողմէ գիւղին վրայ պարբերաբար տեղի կ'ունենան կրակոցներ, որոնք զոհեր կը խլեն:

Լրատու գործակալութիւնը ոչ մէկ հիմնաւոր պատճառ ներկայացուցած է՝ փաստելու համար, որ կրակոցը հայերու կողմէ եղած է:

ՊԱՔՈՒԻ ՄԷՋ՝ ԽՈՒՃԱՊ

Ազրպէյճանական «Ենի Մուսաւաթ» քերթը կը պնդէ, թէ Ազրպէյճանի Գախաբազ Հայտար Ալիեւի վերահատուկեցեալ ետք ազրպէյճանական կառավարութեան մէջ խուճապ կը տրի: Ալիեւ երկու շաբաթ առաջ զազանկագեղձի վերահատուկեցեալ Ենթարկուած էր Միացեալ Նահանգներու մէջ:

Վախճանով մօտալուտ իշխանափոխութեան՝ ազրպէյճանցի բարձրաստիճան որոշ պաշտօնատարներ երկրէն դուրս կը բերեն իրենց ընտանիքները եւ ունեցումները:

Ազրպէյճանական «Էլ Բարիէթ» քերթը 16 Փետրուարին գրած է, որ Միացեալ Նահանգներու Քիլիվեյտ քաղաքին մէջ Ալիեւի վերահատուկեցեալ շատ լուրջ եղած է, եւ ան արդէն գրած է իր կտակը:

Ա. ՄԿՐՏՉԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ՝ ՀԱԴԻՐՈՒԹԻ ՄԵՋ

Շաբաթ, 16 Փետրուարին, Հաղրութի մէջ բացուած կատարուած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն խորհուրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչեանի յուշահանդիս:

Հանդիսութեան ընթացքին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւոր Լեւոն Հարաւանի ներկայացուցած է Արցախի խորհրդարանի առաջին նախագահին քաղաքական գործունէութիւնը: Արթուր Մկրտչեանի կուսակցական գործունէութեան մասին արտայայտուած են Հ. Յ. Դ. Արցախի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Արմէն Սարգսեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն խորհուրդի առաջին ժողովի պատգամաւոր Վլատիմիր Յարութիւնեան:

Յուշահանդիսը բացման հանդիսութիւնը աւարտած է երգման արարողութեամբ: Խումբ մը երիտասարդներ մուտք գործած են Դաշնակցութեան շարքերը:

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ Կ'ԱՅՑՑԵԼԷ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

15էն 19 Փետրուարին պաշտօնական այցելութեամբ Արաբական Միացեալ Էմիրութիւններ կը գտնուէր Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեանի ղեկավարած պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին Երեւանի Պետական համալսարանի նախագահ Ռատիկ Մարտիրոսեան եւ Երեւանի Բժշկական համալսարանի նախագահ Վիլին Յակոբեան:

16 Փետրուարին հայրենի պատուիրակութեան հետ հանդիպում ունեցած է Էմիրութիւններու բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան նախարարը: Այս հանդիպման ընթացքին քննարկուած են կրթական եւ գիտական մարգերուն մէջ երկու երկիրներու համագործակցութեան, միացեալ ծրագրերներու իրականացումն եւ Հայաստանի ու Արաբական Միացեալ Էմիրութիւններուն միջեւ կրթութեան եւ գիտութեան մարգերուն մէջ համագործակցութեան շուրջ համաձայնագրի ստորագրման նախապատրաստութեան առնչուող խնդիրները:

Արաբական կողմը բարձր գնահատած է Հայաստանի գիտական, կրթական ներուժը եւ կարելի չ'ընկալուած է Հայաստանի հետ համագործակցութեան քաղաքացու մը ընդլայնումը:

17 Փետրուարին Արաբական Լիկային կից գործող «Համակարգման եւ Ուսումնասիրութիւններու Չափանիշներ»-ին մէջ կայացած է Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Լ. Մկրտչեանի դասխոսութիւնը՝ «Կրթական համակարգը Հայաստանի մէջ» նիւթով:



ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՄԻ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԿԸ ԽԱՆԳԱՐԵՆ ԴԵՍՊԱՆ ԼՈՂՕՂԼՈՒԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 14 Փետրուարի երեկոյան, Լոնկ Պիլի Գրքարարի պետական համալսարան իր այցելութեան ընթացքին, Ուաշինգթոնի մէջ Թուրքիոյ դեսպան Օսման Ֆարուք Լոզոզլու բողոքի ցուցերով դիմաւորուեցաւ եւ դասախօսութեան ընթացքին նեղ կացութեան մատնուեցաւ՝ Հայկական Յեղասպանութեան եւ Թուրքիոյ մարդկային իրաւանց մասին հարցումներու տարափոխ մը:

Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կողմէն ընդառաջելով՝ բազմաթիւ հայրերին հաւաքուած էին հանդիսարան՝ իրենց հարցումներով դիմաւորելու համար դեսպան Լոզոզլուն, որ այս օրերուն քարոզչական նպատակներով շրջագայութեան մը ձեռնարկած է Ամերիկայի զանազան նահանգները:

Դեսպանը իր ելոյթին ընթացքին փորձեց կեղծոնանալ թուրքեւմերիկեան գործակցութեան վրայ, սակայն ենթարկուեցաւ Թուրքիոյ մարդկային իրաւանց ոտնակոխումներուն, Հայկական Յեղասպանութեան ուրացման, Կիպրոսի բռնագրաւման եւ քիւրտերու դէմ հալածանքին վերաբերող հարցումներու տարափոխ մը: Դեսպանը նեղ կացութեան մատնուեցաւ եւ հարցադրողները ամբաստանեց ըսելով, որ ճշգրիտ տուեալներ չունին իրենց հարցումներուն համար եւ Հայկական Յեղասպանութիւնը բնութագրեց իրբեւ «երկու երես ունեցող պատմութիւն մը»: Այս արտայայտութիւնը ընդգծումի բարձր այլը մը յաւաքուած սրահին մէջ: Դեսպանը խուսափողական պատասխաններ տուաւ յատկապէս մարդկային իրաւանց հարցերուն եւ Ազոյէյճանի նկատմամբ իր երկրին կեցուածքին վերաբերող հարցումներուն:

Հանդիսարանէն դուրս, Հայ Դատի Յանձնախումբին, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան եւ համալսարանի հայ ուսանողներու ընկերակցութեան մասնակցութեամբ տեղի ունեցաւ բողոքի խաղաղ ցոյց մը, որուն ընթացքին բաժնուեցան թրքական ուրացումները եւ ոտնձգութիւնները նկարագրող թուղթիկներ: Յուցարարները նաեւ պարզեցին Թուրքիան դատապարտող պատմութիւնը:

ՀԱՅ - ՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԵՒՈՅ ՍՊԱՌԱՋԻՆՍԱՆ ԴԵՄ

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը կը տեղեկացնէ, թէ միացած է Ամերիկեան - Յունական Հիմնարկին՝ ամերիկեան երկու մարտանաւերու Թուրքիոյ վաճառքին դէմ աշխատանք տանելու համար Միացեալ Նահանգներու Բոնկրէսին մէջ:

Արդարեւ, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութիւնը Յունուար 23ին յայտարարած է, թէ կը նպատակադրէ Թուրքիոյ վաճառել «Օլիվեր Լազար Փերի» տիպի երկայրկանի երկու մարտանաւեր, որոնք Թուրքիոյ պիտի արժեն աւելի քան 100 միլիոն տոլար:

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի տնօրէն Արամ Համբարեանի համաձայն, Ամերիկեան - Յունական Հիմնարկին հետ աշխատանք պիտի տարուի քոնկրէտականներուն եւ ամերիկեան վարչակազմին մօտ, անոնց մատանաշէյով նման վաճառքի մը վտանգները արեւելեան Միջերկրականի շրջանին համար ընդհանրապէս եւ Հայաստանի, Յունաստանի, Կիպրոսի եւ Թուրքիոյ միւս դրացիներուն համար յատկապէս: «Հայաստան չի կրնար սպասուի ըլլալ, այնքան ատեն որ Թուրքիա գերզինուած է եւ կը շարունակէ ուրանալ Հայկական Յեղասպանութիւնը» ըսած է Համբարեան:

Մինչ Թուրքիա կը շարունակէ զինուորի իր քաղաքականութիւնը, Միջազգային Դրամական Ֆոնտը Փետրուար 3ին յայտարարեց, որ որոշած է Թուրքիոյ յատկացնել 12 միլիարտ տոլարի վարկ մը: Այսպիսով Անգարա Միջազգային Դրամական Ֆոնտէն ստացած է Համբարեանի 31 միլիարտ տոլարի օժանդակութիւնը:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հայկական Յեղասպանութեան ուսումնասիրութիւններու «Ձօրեան» հիմնարկը կը տեղեկացնէ, որ 6 - 16 Օգոստոս 2002ին Թորոնթոյի համալսարանին մէջ պիտի կազմակերպէ Յեղասպանութեան եւ մարդկային իրաւանց մասին երկու շաբթուան համալսարանական դասընթաց մը, որ պիտի ընդգրկէ հետեւեալ նիւթերը՝  
- Յեղասպանութեան պատմութիւնը եւ գործադրման միջոցները.  
- Յեղասպանութեան տեսական եւ բաղադատական մօտեցումները (կեղոնանալով Հայկական Յեղասպանութեան, Հրէական Ողջակիցութիւնը եւ Ռուսաստանի Յեղասպանութեան վրայ):

Շար.ը՝ էջ 10

«ԱՐՄԵՆՓՐԵՍ»ԵՆ ՈՒՇԱԳՐԱՄ ՅԻՇԵՑՈՒՄ ՍԸ՝

ԷԿՈՅԵԱՆԻ ԺԱՊԱԻԷՆԸ ՈՒՆԵՑԱԾ Է ԻՐ ՆԱԽԸՆԹԱՅԸ՝ 1930ԻՆ ՅՈՒՑԱԳՐՈՒՄԸ «ԵՐԳՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ»Ն

Շարժապատկերի աշխարհին մէջ հազուադէպ երեւոյթ է, որ ժապաւէն մը տակաւին հրապարակ չի կատարուած, նկարահանուած, այնքան հետաքրքրութիւն եւ ազդու կանչ, իսանդավառութիւն եւ դժգոհութիւն յառաջանէ, որքան քանատահայ բնագրիչ Ադոմ էկոյեանի «Արարատ» ժապաւէնը:

Ոչ միայն հայկական մամուլը, այլեւ Ֆրանսայի կարեւորագոյն թերթերը, ինչպէս «Միկաթ»-ը եւ «Լը Մոնտը»-ը, յօդուածներ նուիրեցին այս գործին՝ շեշտելով շարժապատկերին զխաւոր նիւթը՝ 1915ի Հայկական Յեղասպանութիւնը եւ ընդգծելով անոր նկատմամբ թրքական բռնութեան հակազդեցութիւնը: Թուրքիոյ պետական քարոզչական մեքենան եւ թրքական մամուլը շարժանքին ի վեր «կրակ կը ժայթքեն» Ադոմ էկոյեանի «Արարատ» ժապաւէնին դէմ, հնարքներ կը մտածեն արգիլելու համար «Արարատ»ին հրապարակումն ու ցուցադրութիւնը:

Լստ «Ազատութիւն»-ը աստիճանաբար, էկոյեանի «Արարատ»ը 1931ին Ֆրանսայի մէջ ունեցած է իր բախտակիցը: Փարիզի «Յառաջ» օրաթերթի եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան արխիւներէն ի յայտ եկած է, որ «Արարատ»ին նախատիպարը գոյութիւն ունեցած է տակաւին 1931ին:

Այդ շրջանին աշխուժ նամակագրութիւն տեղի ունեցած է Թուրքիոյ դեսպանատան եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան Արեւելքի բաժնիին միջեւ: Հարցը կը վերաբերէ ժապաւէնի մը, որուն անունը «Երգն Հայաստանի» է: Ան ամբողջութեամբ ներկայացուցած է Հայկական իրական կեանքը: Ժապաւէնին մասին հրապարակումներ կան «Յառաջ»ի 1930ի վերջին եւ 1931ի առաջին թիւերուն մէջ: Հոն կ'ըսուի, թէ բեմադրիչն է Կորգանեան: Ժապաւէնին իրենց մասնակցութիւնը բերած են տիկին Քնարիկ (կ'ենթաթաղուի, որ իսօքը Շարլ Ազնաւուրի մօր մասին է) եւ Շահան Սարեան:

Ամբողջովին հայկական իրական կեանքէն առնուած նիւթն է, որ օրին յարուցած է թրքական մեծ հակազդեցութիւնը: Արտաքին գործոց նախարարութեան 1931 թուականի Ապրիլ 22ի արձանագրութեան մէջ նշուած է, որ Թուրքիոյ դեսպանատանը դիմած է՝ արգիլելու համար Հայկական այս ժապաւէնին ցուցադրութիւնը: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան արխիւներուն մէջ գրուած է. «Հայկական քարոզչութեան այս ժապաւէնին երկրորդ մասին մէջ թարգմանի եւ վարդերու տեսարաններ կան, թրքական գործը-

րու կողմէ 1922ին իզմիրի հրկիզումը, եւ... Հայ հայրենասէրներու ուխտը՝ հայկական դրօշը պարզել Արարատի վրայ»:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը 1931ի Յուլիս 3ին գրութեամբ մը թրքական դեսպանատան կը տեղեկացնէ, թէ խնդրոյ առարկայ ժապաւէնի գրաքննութեան հետքնին յանձնախումբը յետ կոչած է ժապաւէնի ցուցադրութեան նախնական արտօնագիրը, հետեւաբար ժապաւէնը այլեւս չի կրնար հանրային ցուցադրութեան առարկայ ըլլալ: Գոյուցութիւն ունի նաեւ թրքական դեսպանատան 10 Յուլիսի թուականի վերջին մագիւն շնորհակալութեան նամակը:

Փաստաթուղթերուն մէջ կայ նաեւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան Արեւելքի գրասենեակին կողմէ

ԹՐԲԱՆՊԱՍՏՆՈՐ ԲԱՆԱԶԵԻ ՔՈՆԿՐԵՍԻ ՄԷՉ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբը անցեալ շաբաթ հաղորդեց, որ խորհրդարանական էլպրոք Ուիլի Նոյմբերքին Բոնկրէսին ներկայացուցած է հակահարեկական պայքարին մէջ Թուրքիոյ դերը գնահատող բանաձեւ մը, որուն ցարդ իրենց գորակցութիւնը յայտնած են 20 այլ խորհրդարանականներ:

